# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
### ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 12-Ն

02/12/2011

ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2012Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

---

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի16 հոդվածի18 կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով :

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնքում 2011 թ-ի համար

Տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը :
1. Հայաստանի Հաննրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետական շինարարական նախագծին համաձայն նոր շենքերի, շինությունների / ներառյալ ոչ հիմնական / շինարարության/ տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝
1/ Մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում այգեգործական / ամառանոցային / տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500դրամ :
2/ սույն կետի << 1-ին>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար
ա.201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000դրամ :
բ. 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000դրամ:

գ. 1001 և ավելի քմ. Ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 35000դրամ;

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

3/ Մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500դրամ :

4/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերս ունեցող օբյեկտների համար 2500 դրամ :

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման վերականգման, արդիականացման աշխատանքների/բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն 1500 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույտվության համար տեղական տուրքը սահմանել 2500 դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 2500դրամ;

2/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 2500 դրամ :

5. Համայնքի տարածքում

1/ բացոտյա առևտուր կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ:

2/ հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար 150000 դրամ:

6.Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները/ սաունաները/ խաղատները ժամը 24-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1/Առևտրի օբյետների համար 25000 դրամ :

2/ Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50000 դրամ:

7.Համայնքի տարածքում մարդատար տաքսու/ բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10000 դրամ:

Տեղական վճարներ

1.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարություն փաստագրելու համար, մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման համար վճար սահմանել 10000դրամ:

2.Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար, մատուցման ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 դրամ :

3. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 3000 դրամ:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՎՈԼՈԴՅԱ ԱԹԱՆՅԱՆ

ՆԱՄԵՍՏ ԲԱԴԱԼՅԱՆ

ՇԱԼԻԿՈ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ԳԱԳԻԿ ԵԳՈՐՅԱՆ

ՆՈՐԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ

ՌՈՒԲԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԻՄՈՆ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
### ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 11-Ն

02/12/2011

ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 Հոդվածի 3-րդ կետի պահանջներով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

Հովտաշատ համայնքի 2011թ-ի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները

1. Վարչական բյուջե՝

Ծախսային մաս

04-5-1 (Ճանապարհային տրանսպորտ) ծախսային ծրագրի 4131 հոդվածից պակասեցնել 600.0 հազ. դրամ

ավելացնել՝

06-3-1 (Ջրամատակարարում) ծախսային ծրագրի 4212 հոդվածին  400.0 հազ դրամ

\10-7-1 (սոց հատուկ արտոնություն/ այլ դասին չպատկանող) ծախսային ծրագրի 4729 հոդվածին 200.0 հազ դրամ

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹԱՆՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ՆԱՄԵՍՏ

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՇԱԼԻԿՈ

ԵԳՈՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԻՄՈՆ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
### ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 14-Ն

09/12/2011

## *ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ*

---

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման Մասին >> Հայաստանի Հանրապետության Օրենքի 16 Հոդվածի 3-րդ Կետի Պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

*1. Հաստատել Հովտաշատ համայնքի 2012թ-ի վարչական բյուջեն , եկամուտների - ծախսերի գծով 48609. 0հ.դ:*
*2. Սահմանել համայնքի 2012թ-ի վարչական բյուջեի եկամուտները , ըստ առանձին եկամուտների հետ-յալ չափերով.*

| | | |
|---|---|---|
| | | *Հազ. դրամ* |
| *ա/* | *հարկեր - տուրքեր, այդ թվում* | 12095.0 |
| *ա.1* | *գույքահարկ շենքերի - շինությունների* | *350.0* |
| | *ֆիզիկական անձանցից* | *230.0* |
| | *իրավաբանական անձանցից* | *120.0* |
| *ա.2* | *հողի հարկ* | *7200.0* |
| | *ֆիզիկական անձանցից* | *7200.0* |
| | *իրավաբանական անձանցից* | ----- |
| *ա.3* | *գույքահարկ փոխադրամիջոցներից* | *4000.0* |
| *ա.4* | *տեղական տուրքեր* | 545.0 |
| | *շենքերի - շինությունների քանդման թույլտվ. համար շինությունների շինարարության թույլտվութ. համար, որից* | |
| | *հիմնական շինությունների համար* | *45.0* |
| | *խմիչքի վաճառքի թույլտվության համար* | *100.0* |
| | *ծխախոտի վաճառքի թույլտվության համար* | *100.0* |
| | *վառելիքի վաճառքի թույլտվության համար* | *300.0* |
| *բ/* | *Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ* | 34330.0 |
| | *պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման* | 34330.0 |
| | *սկզբունքով տրվող դոտացիաներ, այդ թվում՝* | ------ |
| | *այլ դոտացիաներ* | |

| | | |
|---|---|---|
| գ/ | Այլ եկամուտներ | 2184.0 |
| | *հողի վարձակալության* | *1184.0* |
| | *Պատվիրակված լիազորություններ* | *600.0* |
| | *Այլ ոչ հարկային եկամուտներ* | 400.0 |
| *դ/* | *Ընդամենը եկամուտներ* | 48609. 0 |

*3.Հաստատել Հովտաշատ համայնքի 2012թ-ի վարչական բյուջեից հատկացումները ըստ բյուջետային ծախսերի, գործառնական դասակարգման հետ-յալ չափերով.*

| | | *հազ. դր* |
|---|---|---|
| *01-1-1* | *Օրենսդիր - գործադիր մարմին* | 19443.4 |
| *01-3-3* | *Ընդհանուր բնույթի ծառայություններ* | 86.0 |
| *01-6-1* | *Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ, այլ դասին չպատկանող* | 1150.0 |
| *04-2-1* | *Գյուղատնտեսություն* | *850.0* |
| *06.4.1* | *Փողոցների լուսավորում* | *770.0* |
| *05-1-1* | *Աղբահանում* | *1000.0* |
| *08-1-1* | *Հանգստի - սպորտի ծառայություն* | *150.0* |
| *08-2-3* | *Մշակույթ* | 2712.6 |
| 08.2.4 | Մշակույթային. ծառայութ. | 500.0 |
| 04.5.1 | *Ճանապարհային տրանսպորտ* | 1000.0 |
| *06.3.1* | Ջրամատակարարում | *400.0* |
| *09-1-1* | *Նախադպրոցական կրթություն* | *10000.0* |
| *09.2.1* | Հիմնական ընդհանուր կրթություն | *200.0* |
| *10-7-1* | *Սոց. հատուկ արտոնություն /այլ դասին չպատկանող/* | *3000.0* |
| *11-1-2* | *ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ* | 7347.0 |
| | *նույն թվում հատկացում ֆոնդային բյուջե* | -------- |

*4.Սահմանել սույն որոշման կետով սահմանված հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակները ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների հետ-յալ չափերով՝*

| | | *հազ. դր.* |
|---|---|---|
| | *ԸՆԴԱՄԵՆԸ ծախսեր ,այդ թվում* | 48609.0 |
| *4111* | *աշխատավարձ* | 14922.0 |
| 4112 | Պարգևատրում | 1203.5 |
| *4131* | *սոց. ապահով վճար* | 2920.5 |
| 4211 | Բանկային ծառայություններ | 100.0 |
| *4212* | *էներգետիկ ծառայություն* | 1970.0 |
| *4213* | *կոմունալ ծառայություն* | *1050.0* |
| *4214* | *կապի ծառայություն* | *480.0* |
| *4215* | *Ապահովագրական ծախսեր* | *50.0* |
| *4221* | *գործուղում* | *100* |
| *4232* | *համակարգչային ծառայություն* | *250.0* |
| *4234* | *տեղեկատվական ծառայություն* | *280.0* |
| *4235* | *կառավարչական ծախսեր* | *150.0* |
| *4239* | *ընդհանուր բնույթի այլ ծառայություններ* | 950.0 |

| | | |
|---|---|---|
| 4241 | մասնագիտական ծառայություններ | 450.0 |
| 4252 | մեքենաների – սարքավորումների ընթ. նորոգում | 350.0 |
| 4261 | վարչական նյութեր | 300.0 |
| 4264 | տրանսպորտային նյութեր | 600.0 |
| 4267 | կենցաղային – հանրային սննդի նյութեր | 150.0 |
| 4269 | հատուկ նպատակային այլ նյութեր | 1200.0 |
| 4637 | ընթացիկ դրամաշնորհներ ՀՈԱԿ-ներին | 10000.0 |
| 4729 | այլ նպաստներ | 3200.0 |
| 4819 | նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպ. | 586.0 |
| 4891 | պահուստային միջոցներ | 7347.0 |
| | նույն թվում հատկացում ֆոնդային բյուջե | ---------- |

5.Հաստատել սույն որոշման առաջին կետով սահմանված հատկացումների բաշխումը ըստ առանձին գործառնական – տնտեսագիտական դասակարգման թիվ 1 հավելվածի համա**ձայն:**

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավագանու անդամներ

ԱԹԱՆՅԱՆ ՎՈԼՈԴՅ

ԲԱԴԱԼՅԱՆ ՆԱՄԵՍՏ

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՇԱԼԻԿՈ

ԵԳՈՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԻՄՈՆ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ